ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար <<Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքի կառուցում>> ծրագրի շրջանակներում դպրոցի տիպարային շենքի նախագծման և ՀՀ մարզերի 22 համայնքում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 պայմանագրում 2020 թվականի հուլիսի 28-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ Կառավարության 2020 թվականի հուլիս 16-ի N 1215-Ա որոշում:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի կատարման ժամկետի և N 1 հավելվածում գնման առարկայի փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

22.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 գնման պայմանագրի

ք. Երևան 28.07.2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի N 1215-Ա որոշումը և <<Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքի կառուցում>> ծրագրի շրջանակներում դպրոցի տիպարային շենքի նախագծման և ՀՀ մարզերի 22 համայնքում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 22.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի N 1 հավելվածում <<Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոց>> բառերը փոխարինել <<Վաղատին գյուղի միջնակարգ դպրոց>> բառերով:

1.1.2 Պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգել մինչև 2020 թվականի օգոստոսի 20-ը ներառյալ:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Չարենցի 1
կառավարական տուն 3	<<Արդշինբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2470067235860000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01503291
Հ/Հ 900011027704	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Գ. Ազիզյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.